

Ե Ր Կ Ն Ա Յ Ի Ն Ս Ր Ն Գ Ա Հ Ա Ր Ը

Այն ժամանակ մարդիկ գեղեցկութիւնը կը պաշտէին ու կը կոչէին երգ, կը կոչէին սէր: Բոլոր պատանիներն ունէին իրենց սրինգները կտրուած թարմ մասուրներէ՝ որոնց ծոցին մէջ վարդը տակաւին արշալոյսի կը սպասէր: Չկար տրամութիւն սրտերու մէջ եւ ոչ թախիժ բերքուն տակ: Կերպէին կեանքը ինչպէս արարչական օրերուն՝ երբ կոյս էին ծաղիկները, արեւը նոր հարս էր եւ երկինքը սուրբ էր մեղաւոր ակնարկներէ: Երգիքներէն ծուխը կ'ելլէր իրերէ մէկ սրտէ, վարդերը կը բուրէին բոլորին համար, գինին կը խմէին բոլոր հարսնիքներու մէջ՝ բոլորին կենացը:

Այդ օրերուն կ'ապրէր Սընգահար Ծերունին, որ անուն չունէր, ինչպէս անուն չունէին արքայական պարտէզներու սոխակները: Նա ամէնուն երգիչն էր, աստղերուն երգը, ծաղիկներուն մեծիւն, դաշտերու ոգին, գերեզմաններու յարութիւնը: Կ'ըսէին թէ ամէն գիշեր դրախտէն կու դար ոսկի մեղուն անոր շրթներուն մէջ անարատ մեղր կաթնեցնելու եւ ամէն արշալոյսին իր երգն աւելի քաղցր կը հնչէր:

Արուեստիւն հետ կը բարձրանար Ծիրանիներու բլուրը, բոլորին համար արշալոյսն ողջունելու: Կը հաւաքուէին իր շուրջն եղնիկները հեռաւոր ծառիկներէ, կու դար հօտը Կապուտակ լեռներու կողերէն սիրոյ հառաչանքներով: Ու սէրը արշալոյս կ'ըլլար, գոյն կու տար ծաղիկներուն, երանգ՝ թուփերուն, հանդիպակաց ծովակին մէջ սուտակ եւ ոսկի կը լեցնէր, հաւքերու փետուրներուն վրայ կը նկարէր ամբողջ գոյները, ու լեռները կը փոխուէին դահանակ, դաշտերը զմրուխտ: Կ'արթննային հիւզակները, ինչպէս երազը գեղեցիկ աչքերու մէջ, եւ ինքն սրնգա-

հար պատանիներ կ'ըլլէին Ծիրանիներու բլուրը, նման ինքն հրեշտակներու, ձեռքերնուն մէջ քնար ու բամբիւ, տաւիղ եւ վին, տափ ու ծնծղայ: Անոնք կը շարուէին Սընգահար ծերունիին շուրջը, իրենց նւագարանները անդերուն վրայ լուս եւ սպասող:

Տարին ամբողջ տօն էր իրենց համար եւ վարդաւառին կը պառկուէին աքաւիտներու կապոյտ ծաղիկներով, աղբերանց-արիւնով եւ հրաւառ հիւրիկներով: Ծերունի սրնգահարին համար վերջին վարդաւառն էր՝ եւ այդ օրը ելան Ծիրանիներու բլուրը, ինչպէս աստղերը կը հաւաքուին Կարօս խաչին շուրջը:

— Դուք եկած էք, ըսաւ Սընգահար ծերունին, լսելու սիրոյ դադարիքը իմ երգերուն մէջ՝ որ յաւերթութիւն կու տայ բոլոր կեանքներուն եւ կ'աստուծացնէ գեղեցկութիւնը սրտերու խորանին վրայ: Ես բերած եմ ամէն մէկուդ համար դրախտի բանաստեղծութիւններէն անեւանդուած տղեր՝ որոնց հեղինակը մարմնով երկինք վերացաւ երբ մարդիկ մեղանչեցին սիրոյ սեղանին վրայ, եւ մեղքը կոչեցին աստուած ու գեղեցկութիւն:

Իմ երգերս անմահական ծաղիկներու հեղաճկուն պարերն են, տերեւներու սօսափը, առուակներու մրմունջը, կենաց ծառին անուշահամ պտուղը: Խմեցէք այդ երգերը եւ պիտի գինովնաք, ճաշակեցէք այդ պտուղը եւ պիտի անմահանաք: Ես պիտի հեռանամ այս աշխարհէս, թերեւս այս ժայռերու ծոցը, կամ այս վանքին ստուերներուն մէջ, բայց ես կենդանի եմ եւ պիտի մարմնանամ ամէն մէկուդ մէջ բոլոր եղանակներու գեղեցկութեամբ, բոլոր արշալոյսներու քաղցրութեամբ: Երա-

նի՛ անոնց որ պիտի կարենան թարգմանել իմ սիրտս եւ ըմբռնել իմ խօսքերուս խորհուրդը:

Քեզի համար է իմ առաջին երգս, ո՛վ խարտիչապէս պատանի, դուն որ արեւէն առեր ես ոսկի վարսեր եւ ծովակէն աչքերուդ գոյնը:

Աչքերն էին ծովի նրման ծիծաղախիտ
Արշալոյսէ արշալոյս,
Լուսաճառանգ երկու արեւ իրար նրման
Լոյս ծագեցաւ աշխարհին:

— Աստուածային Բանն է, գոչեց առաջին պատանին, Լոյսը լոյսէն ծնած, արեւն արեւուն մէջ: Եւ բոլորը միասին նուագեցին:

Լոյս սուրբ ողջոյն քեզի:

— Ո՞վ է այն՝ որուն պսակ կը կաղմեն տասներկու աստղեր եւ ոտքերուն տակ արծաթափայլ մահիկն է աթոռ, ըսաւ Ծերունին, սպիտակ պատմութեանով պատանիին: Արեւները լոյս չունին անոր գեղեցկութեան առջեւ, աստղերը փայլ չունին անոր աչքերուն քով, վարդերը երանգ՝ անոր վառ այտերուն վրայ: Լսէ իմ երգս, սպիտակ պատմութեանով պատանի:

Յօնքերն էին քաշուած ներքին մէկ կամար
Ու դէմք անոր եւ կ'ըսեմ
Որ նրման է միջօրէի արեւին:

— Երկինքներու թագուհին է, գոչեց երկրորդ պատանին, այն Կոյսը որուն ծոցը լեցուն է կարմիր վարդով եւ թեւերն են ծիրանի:

Բարձրացոյցին իրենց նուագարանները դէպի արեւելք եւ նուագեցին երկնքի հրեշտակներուն հետ:

Ողջոյն քեզ Մարիամ:

— Դուն որ գինիի վառ գոյներով այտեր ունիս եւ չորս բոլորը հիւսուած երեք կարգ ասմաղուն վարսեր, ըսէ՛ ո՞վ պատանի, ի՞նչ կ'ուզես որ քեզի համար եր-

գեմ, քու մէջդ է արդէն իմ տողերուս շունչը եւ դուն ես երկնապետ ծաղիկը:

Բարկ արեւի վարսերն եղան
Գոհար վարդին ոսկի ֆօղ,
Քօղին վերայ կիտուած էր
Գունեան ծաղիկ ծովային:
Ծովն է անուր,
Փըրփուր ծաղիկ,
Երկին ծաղիկ,
Ծոցը պըտուղ
Շուրջը բերքում
Շուրջը տերեւ
Ու տերեւն էր
Ոսկի տաւիղ Արարչին:

— Ամենաբեր գեղեցկութեան երգն է, ըսաւ ասմաղուն վարսերով պատանին, այն որ վանաստուր կը կոչուէր հին օրերուն, եւ Մայիսներուն կու տայ զմրուխտէ պատմութեան եւ ամառներուն վարդաւառի գոյն:

Ոտքի ելան բոլորը եւ դարձան դէպի Ծաղկաձոր ու մէկ սարսուռով նուագեցին:

Կապոյտ է երկինքն
Երկիր ծիրանի,
Ծաղիկն երկնագեղ
Ու ծոցը պըտուղ:...

— Մէջքիդ կապած ես արծաթափայլ կամար եւ ծայրերն ոսկի, վրան չափիւղայ եւ քարեր թանկագին, ո՛վ պատանի, ծիրանի պատմութեանդ է ոսկեղէն ամպ, ներքեւն այդ գօտիին սիրոյ կամուրջ: Քեզի համար յօրինած եմ այն երգը որ դեւերուն սարսափն է, հրեշտակներուն ուրախութիւնը, եւ որուն մարդիկ տակաւին դադարիք չեն գիտեր: Շարժեցան իր մատները տաւիղի լարերու պէս, պայծառացան շրթները ցոլացիկ վտակի նման:

Հրճան կոխեցին
Գինին էր բոսոր,
Գինին խառնուած
Բուրեան ծաղիկով:

Հարսնիք կար այնտեղ
Բաժակները լի,
Խըմեցին մարդիկ
Մընացին ծառաւ,
Դարձան անհամբեր
Եղան նոր մարդիկ:

— Սէրը, սէրը, դոչեց ծիրանի պատմութեանով պատանին, սէրը որ Եղեմէն կը բխէր եւ կ'ոռոգէր անթառամ ծաղիկները, սէրը որ անապատ սրտերուն մշտնջեան դարձներ կու տայ եւ ոպնեալ ժայռերէն վտակներ կը հանէ:

Նուազեցին բոլորը սիրոյ երգը որ անուն չունի եւ ոչ մարդկային բարբառ զայն թարգմանելու:

Հինգերորդ սրնդահար պատանին նստած էր սաթէ ժայռի մը վրայ, սրինգը անութին տակ, աչքերն յառած դէպի այն կապոյտ ծովակը՝ որ Վանակն կը կոչուի:

— Գիտե՞մ ուր կը թափառին միտքերդ, ո՞վ աստղահանդերձ պատանի, ըսաւ Վարպետը, դուն կը սիրես այն բանաստեղծութիւնը որ յարութիւն կու տայ ծաղիկներուն եւ Մայիսը կը բերէ սպիտակ շուշան մը ձեռքին:

Բարձրացուց վերստին իր ծիրանի սրինգը դէպի զմրուխտէ դաշտերը, դէպի սարբինաներէն կախուած մատղաշ ողկոյղները:

Շուշանն հովտին մէջ կը շողար
Կը շողշողար արեգին դէմ,
Զով էր գեփիւնն հիւսիսային,
Քաղցրիկ հովիկն հարաւային,
Ցօղով գեղուն գոհար շուշանն
Շաղը ծոցին, շողն երեսին
Շող կ'անմարելէր մարգարտաշար:

— Գարունն է, դարունը, դոչեց հինգերորդ պատանին, այն որ հողին մէջ, ջուրերու վրայ կը սփռէ կեանքը եւ երգ կը դնէ թռչուններու կտուցին եւ գոյն կու տայ հաղթվարդին:

Սուէք ձեր տաւիղներն, առէք քնարներն ու վիշը, զարկէք տափին ու ծնծղային, երգենք, երգենք, երգենք:

Շուշանն առաւ ամպերէն շաղ,
Ամպերն առին շող արեւն,
Ու ծաղիկներ քացուեցան....

Վեցերորդ պատանին, այն՝ որուն աչքերուն մէջ արեւը հորիզոններ կ'երազէ եւ կապոյտն անրիծ է, ըսաւ:

— Ո՞վ երկնային զեղեցիկութեանց աստուած, նուազէ՛ ինձ համար այն խրդը՝ որ անմահութեան յաղթանակն է եւ չի մարիր դիշերներու հետ հորիզոններու վրայ:

Երգահար Ծերունին հնչեցուց իր սրինգը հովիւներու եղանակով, դարձած Մասիներու անարատ դադաթները:

Սայլ մը կ'իջնէր Մասիներէն
Անոր վըրան աստղերն արոտ,
Անոր վըրան ոսկեղէն գահ
Վըրան Արքայ մանանչաւտ:
Եւ շուրջն հազար արեգակներ
Սերովրէներ, Քերովրէներ,
Զեռքերուն մէջ հազար բընար:
Հովովելով կու գար սայլիկն
Արարատի գագաթներէն,
Եզներն էին ըսպիտակ սար
Եւ սամոտիքն ապրեշուտէ
Եւ եղջիրներն ոսկեղէն խաչ:

— Ո՞վ մեր քրիստոնեայ հայրենիքին յաղթական յարութիւն, դոչեցին բոլորը եւ կարծես իրենց հետ բամբուհար դուստներ եղան հայրենիքի ողջերն ու մեռելները: Ուղղեցին իրենց զարմանազան նըլադարանները դէպի Մասիներու անարատ դադաթները եւ երգեցին:

Փառք Քրիստոսի ամենագոր յարութեան....

Եօթներորդ պատանին նստած էր շուշաններու որայի մը վրան եւ ձեռքին մէջ

սպիտակ վարդ մը, այն՝ որուն հանդերձը նման էր Ծաղկածորին եւ այտերը Սաստիկի վարդերուն գոյնն ունէին:

— Ո՞վ դու հողիացեալ Գարուն, ըսաւ Սրնդահար Ծերունին, դու դաշտերու մանուկ փեսան ես եւ քու անրիծ հարսդ է շուշանազնետ Մայիսը, ո՞ր երգն աւելի սիրելի է քեզի քան երկնային Երգ երգողը:

Մօտեցիր ինձ սիրելիս,
Նըման ես դու այծեամբուն
Նըման քեքեւ եղնիկներու,
Զայնդ սիրոյ տաւիղ է
Հովիտներու մէջ դալար:
Փեսային հետ քեւ քեւի
Ահա կու գայ սիրոյ հարսնուկն,
Աչքեր ունի աղաւթի
Եւ քեւերն են պարանոցին
Լայնակամար մանեակ ոսկի:
Կու գայ լեռնէն կընդրուկի
Բոյրն է նարդոս եւ զըմուռս....

Ու բոլորը միասին նուազեցին սիրոյ խորհուրդը ամենաքաղցր մեղեդիներով:

Մօտեցիր ինձ սիրելիս....

Ութերորդ պատանին ուռենիի դալար ճիւղ մ'ունէր ձեռքին մէջ եւ ճակատը պըճիւղ մ'ունէր ոսկեղէն հասկերով: Աչքերը սուղոյ էին, ինչպէս Սեւանայ լիճը եւ խոչոր էին, ինչպէս Սեւանայ լիճը եւ խոչոր էին նա կը դիտէր Կապուտակ լեռներու ծաղկածին հովիտները՝ երբ Վարպետը հնչեցուց իր ծիրանի սրինգը:

Աւետիս ձեզ ծաղկած ծառեր,
Աւետիս քեզ ծիրանի հարս,
Եւ դալարին սաղաքներ,
Եւ երանի կու տամ անոնց
Որ կը փայլեն միրգերն անոյշ
Միրգերն անոյշ տեսք սիրուն
Ամառական բուրումով....

Եւ ինք պատանիները երանաւէտ տեսիլքի մէջ նուազեցին ծաղիկներու ամենազեղ գովքը, ինչպէս դարնան անձրեւը կը հոսի տաք ու սրտադին:

Ամառական բուրումով
Վարդն է ծըլած, ծայրերն ոսկի,
Շուրջը կարծես զըմրուխտ արեւն
Ըլար բաժակ մ'արքայական....

— Ո՞վ յօտեց այդ քու արեւադարձի եղէգէ սրինգդ, ո՞վ պատանի, ըսաւ Ծերունին. դու երգիչներու բենիամինն ես, եւ տակաւին ծիրանի ցօղը չէ չորցած սրբինդի աչքերէն ու տակաւին Երուսաղէմի աղջիկներուն համբոյրի հոտը կայ անոր վրայ: Դու Արարատէ՞ն եկար թէ Խորասանի պարտէզներէն: Այտերդ ցօրենի այրած գոյն ունին, թեւերդ ծաղկած դեղձենիի բարունակ եւ պատմութեան է աստղադարդ կապոյտը: Վարդէ՞ր նուիրեմ քեզի թէ սաթերերուն սէր, թէ նուսխայ կապեմ սրտիդ վրայ խաժակն զանակներ:

— Ո՞վ երկնային Սրնդահար, թոյլ տուր, որ ես հաւաքեմ այն օրհնեալ փըրանքները որ թափեցան շրթներէդ, որոնք դեղին մազադաթներու լուսանցքներուն վրայ եղան թռչուն, եղան դրախտի ծաղիկ եւ մնացին ոսկեգօծ էջերու շուքին տակ:

— Դու տակաւին տղայ ես եւ մատներդ չեն հասնիր վակելու սրինգին աչքերը, ո՞չ սէր դիտես ո՞չ սրտեր ամոքող երգեր: Լըսէ՛ իմ վերջին երգս դոր քաղած եմ Կեդրոնի նարինջներու սպիտակ ծաղիկներէն:

Վարսերն են լեցուն առուրան ցօղով
Զոր մայրն իւր հիւսեց գիսակ առ գիսակ,
Զեռքերը փափուկ սիրային կամար
Երուսաղէմի պարանոցին գարդ:
Բերան երկու քերք, կարմիր վարդի գոյն
Ծամբուն վըրայ սէրն եղաւ նարոտ,
Որ հոգի առնէ իր գեղեցկութիւնն:
Երգերն են երբաշփ, երգեր սրբազան
Նըրբօրէն հիւսուած եւ ամբողջ խորհուրդ:

ճշմարտութիւնը եւ մահուան տապանա-
քարերուն վրայ յաղթանակող յարու-
թիւնը:

Ինը պատանիները մեկնեցան դէպի ան-
ծանօթ հորիզոններ, եւ Սրնդահար Ծերուն-
նին բարձրացաւ Ծիրանիներու բլուրէն
ձիւնապատ լեռներու դադաթները, աղա-

մանդեայ ժայռեր բացուեցան իր քայլե-
րուն առջեւ, եւ հոն մնաց յաւերժութեան
հետ կարգալու եւ խոկալու մատեան մը՝
որ լայնարաց էր քան մոնչող ովկեանոս-
ները, եւ մարդիկ դայն «Նարեկ» կոչեցին:

Հալէպ

Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

Ա Ռ Տ Է Ր

Ըգգեգ տեսայ կատարներուն ձիւնապատ
Ամպերէն վեր,
Ուր հորիզոնն է անյայտ:
Շուրջը դէմքիդ երեք կարգ
Արշալոյսները ծաղկած
Հագար գոյնով
Վարդերու:
Եւ դուն Աստուած գեղեցկին,
Եւ միշտ մանուկ արեգակ
Այդ գագաթին:
Վերն այդ ոսկեայ խորանին,
Ա՛մպ ես քէ նոր արուեսակ:

Բայց դուն ահա կը բարձրանաս տակաւին
արշալոյսով,
Եւ քեւերէդ կը կաթին
Լոյսեր յակինք, լոյսեր գով,
Մինչ աչքերդ եւն վահագնի
Զոյգ արփիներ
Վարսերդ բոց,
Ծով մ'ինչպէս որ կը սպառի
Արեւուն ծոց
Եւ հունի խութ եւ ափեր:
Ըսէ՛, արդեօք ո՞վ ես դուն,
Երեւո՞յթ քէ զըւարթուն:

Ո՛հ, մինչեւ ե՞րբ եւ մինչեւ ո՞ր արշալոյս
Պիտի ֆախսրես,
Երբ սարերն են արդէն մոռնալ,
Եւ աշխարհն այս վիհ մ'է խոր
Գերեզմանի՛մ պէս անյայտ:
Դուն անմիւս փայլ
Եւ ամբողջ հուր
Աստուածային աչքերէն
Թըռչող կայծակ.
Տիեզերքին պարունակ
Մէ՞զ ես արդեօք լուսեղէն
Թէ Աստուծոյ սուրբ համբոյր:

Ահա կ'անցնիս երկրէ երկին, ուր կապոյտն
է աներեր:
Ոտերուդ տակ կը բացուին
Նոր աշխարհներ շափիւղայ,
Զերդ քաւալող ալիքներ:
Եւ դուն ինչպէս
Աստուած մը հին
Ըստեղծումի սիրահար՝
Լոյս կը փոխուիս լոյսին մէջ
Երագելով միշտ հեռուն,
Խոյանքիդ մէջ անըսպառ
Ո՞ր կը վարգես դուն անվերջ:

Մարմինդ սէգ եւ բագուկներդ հաւասար
Խաչեցեալին,
Տիեզերքներ կը գըրկեն,
Համանչներ սուրբ եւ արդար
Արդ կ'անձրեւեն մեղմօրէն,
Եւ դուն երագ
Եւ տեսիլ
Աղօթքներու երկնահաս
Կը սիրես միշտ յայտնելի
Հագար անգամ վերածին
Հաւատքի մէջ մարդկային
Առանց երբեք գիշերուան:

Լոյսի հասակդ հիմա կարծես կը կանգնի
Հրեղէն սիւն,
Որ անապատն երկրնքի
Ընտրեալներով ծովանայ,
Եւ քեզի հետ մարդկութիւն
Լոյսն ընդունի պատմութեան,
Եւ երգելով
Շարական
Ծրնծղաներով լուսնակի
Միշտ Վարդավառ, տօն ըլլայ
Եւ բըռնեն շուրջն աշխարհի
Սըրբագան պարն հընօրեայ:

Թոյլ տուր որ ես բագուկներովքս կառչիմ
Սուրբ հանդերձիդ,
Եւ երկիրէն քեզ բերեմ
Մեղաւորի աղաղակ:
Դուն Աստուծոյ գահին քով
Պիտ'ըլլաս նոր պատարագ,
Առանց ծովի քանձրախիտ,

Առանց բոյրի
Մարմնդ:
Եւ խորհուրդին այս անհաս
Աղօթագիրք պիտ'ըլլան
Լեռներ, անտառ եւ ովկեան:

Ահա ես իմ ոսկորներով հայրերուս
Պիտի կանգնեմ
Տանար մ'երկինք եգերող,
Հոն ուր լոյսի փոխուեցար:
Պիտի կապեմ ծով ու հող
Ծիածանով երփներփեան,
Որ քեզի հետ
Բերկրաւէտ
Անցնինք հովտէն տրամութեան,
Հոն՝ ուր կապոյտն է վըրան,
Եւ մեր տանարը խորան,
Եւ դուն Զատիկ հայկական:

Ի՛նչ գեղեցիկ եւ ի՛նչ վըսեմ յաղթանակ
գաղափարի,
Դու միշտ պարգած աջդ երկին
Զախըդ ներմակ Մասիսին,
Մեր շըրքներուն աղօթքդ երգ,
Ու մեր սըրտին լոյսըդ վերք,
Կերուն Սիփան
Բուրվառ Նարեկ,
Աստուածացած դուն աւելի՛
Քան Սինայի մարգարէն՝
Պիտի գոչես — Ո՛վ եղբայրներ,
Ո՛վ դուք խաչուած եղբայրներ,
Երթա՛նք — ԱՌ ՏԷՐ:

Հալէպ, 8 Դեկտ. 1950

ՎԱՏԱՏՈՒՐ

